ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2019-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԳՈՐԻՍ - 2019

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացվող «Տեղեկատվության մատչելիություն և հետաքննական լրագրություն առավել իրազեկված քաղաքացիների համար» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհիի շրջանակում «Գործընկերություն և ուսուցում»/ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից: Դրա բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Գործընկերություն և ուսուցում»/ԳՈՒՄ ՀԿ-ն և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության և/կամ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի տեսակետները:

FREEDOM OF INFORMATION CENTER OF ARMENIA

European Journalism Centre

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ ՀԿ
PARTNERSHIP & TEACHING NGO

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3 էջ

ԳԼՈՒԽ 2. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ.....3-4 էջ

ԳԼՈՒԽ 3. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԻՍ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ .....4-8 էջ

ԳԼՈՒԽ 4. ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԿԱՐԻՔՆԵՐ, ԽՆԴԻՐՆԵՐ).....8-10 էջ

ԳԼՈՒԽ 5. ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿՈՂՄԵՐ.....10 էջ

ԳԼՈՒԽ 6. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ.....10 էջ

ԳԼՈՒԽ 7. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....10-11 էջ

ԳԼՈՒԽ 8. ՀԱՆՐԱՅՆԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ.....11 էջ

ՀԱՎԵԼՎԱԾ 1 - «Հանրային կյանքում և տեղական ինքնակառավարման ոլորտում երիտասարդների ներգրավվածության գնահատում» հետազոտության արդյունքները

ՀԱՎԵԼՎԱԾ 2 - Միջոցառումների ծրագիր 2019-2022 թվականների համայնքային երիտասարդական քաղաքականության

ԳԼՈՒԽ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գորիս համայնքի երիտասարդական քաղաքականության 2019-2022 թվականների ռազմավարությունը (այսուհետ՝ Ռազմավարություն) կազմված է երեք հիմնական բաժիններից:

Առաջին բաժինը ներառում է Ռազմավարության մշակման հիմնական նպատակը, երիտասարդական համայնքային քաղաքականության ներկայիս վիճակի վերլուծությունը և երիտասարդության վիճակի նկարագրությունը՝ հենված «Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթությանը աջակցող հասարակական կազմակերպության(այսուհետ՝ ԳՈՒՄ ՀԿ) կողմից «Հանրային կյանքում և տեղական ինքնակառավարման ոլորտում երիտասարդների ներգրավվածության գնահատում» հետազոտության, ինչպես նաև մարզային և ազգային մակարդակներում իրականացված բազմակողմանի վերլուծությունների հիմնական արդյունքների վրա:

Երկրորդ բաժնում ներկայացված են Ռազմավարության հիմնական գերակայությունները՝ ըստ երիտասարդության շրջանում վերհանած կարիքների և հիմնական ռազմավարական խնդիրների, իրականացնող կողմերի հակիրճ նկարագրությունը, ֆինանսավորման, մոնիտորինգի և գնահատման մեխանիզմները, հանրայնացման և հաղորդակցության պլանը:

Ռազմավարության **երրորդ բաժնում** ներկայացված է միջոցառումների ծրագիրը՝ ըստ համապատասխան գործողության, պատասխանատու և համագործակցող կառույցների, իրականացման ժամկետների և ֆինանսավորման աղբյուրների:

ԳԼՈՒԽ 2. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Ռազմավարությունը մշակվել է հիմք ընդունելով՝

- Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի նիստի № 54 արձանագրային որոշմամբ հաստատված ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգի հիմնական դրույթները,
- ՀՀ Սյունիքի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը,
- Գորիս համայնքի 2018-2022 թթ. Զարգացման ծրագիրը,

Երիտասարդների կարիքների վերլուծության և գերակայությունների սահմանման համար փաստական հենք են ընդունվել 2019թ. ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից իրականացված «Հանրային կյանքում և տեղական ինքնակառավարման ոլորտում երիտասարդների ներգրավվածության գնահատում» հետազոտությունը, ինչպես նաև 2013-2018 թվականներին Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի և այլ հասարակական ու միջազգային կազմակերպությունների կողմից իրականացված հետազոտություններն ու զեկույցները:

Ռազմավարությունը սահմանում է Գորիս համայնքի՝ երիտասարդությանն առնչվող խնդիրների լուծմանը միտված գործունեության գերակա ուղղությունները՝ առաջարկելով առավել փաստարկված և իրատեսական լուծումներ:

Գորիս համայնքի երիտասարդական քաղաքականությունը համայնքի սոցիալական քաղաքականության կարևոր և անբաժանելի մասն է և ունի ռազմավարական նշանակություն:

Ռազմավարության նպատակները.

- Նպաստել համայնքի երիտասարդների ազգային դիմագծի, ժողովրդավարական, քաղաքացիական գիտակցության ձևավորմանը,
- Ստեղծել մասնակցային պայմաններ և երաշխիքներ համայնքի երիտասարդների սոցիալականացման, նրանց ստեղծագործ ներուժն ի շահ համայնքի առավել լիարժեք օգտագործելու սոցիալական, տնտեսական, իրավական, քաղաքական, կրթական, հոգևոր, մշակութային ոլորտներում,
- Նպաստել երիտասարդների անհատական, սոցիալական և կրթական աճին, նրանց ներուժը զարգացնելուն և օգնել երիտասարդներին համայնքային կյանքում լիարժեք հաստատվելուն:
- Խթանել երիտասարդների հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային և թվային մասնակցությունը,
- Խթանել երիտասարդների շրջանում հոգևոր-մշակութային և ընտանեկան արժեքների պահպանումն ու զարգացումը,
- Խթանել մարզային, ազգային և միջազգային մակարդակներում երիտասարդական համագործակցութունը, միջմշակութային երկխոսությունը և երիտասարդների շարժունությանը,
- Խթանել երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպը:

Երիտասարդական համայնքային քաղաքականությունը մշակվում և իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմինների, երիտասարդական հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կազմակերպությունների և անձանց մասնակցությամբ:

.Երիտասարդական համայնքային քաղաքականության նպատակը երիտասարդ մարդու ազգային դիմագծի, ժողովրդավարական, քաղաքացիական գիտակցության ձևավորման, երիտասարդ մարդու սոցիալականակցման, նրա ստեղծագործ ներուժն ի շահ հասարակության առավել լիարժեք օգտագործելու սոցիալական, տնտեսական, իրավական, քաղաքական, կրթական, հոգևոր, մշակութային, կազմակերպական, մասնակցային պայմաններ և երաշխիքներ ստեղծելն է: Այն ուղղված է երիտասարդների անհատական, սոցիալական և կրթական աճին նպաստելուն, նրանց ներուժը զարգացնելուն և երիտասարդներին հասարակության մեջ լիարժեք հաստատվելուն օգնելուն:

Ռազմավարության անմիջական շահառուներն են՝

16-30 տարեկան քաղաքացիները, երիտասարդական հասարակական կազմակերպությունները, երիտասարդ ընտանիքները: Ռազմավարության մեջ երիտասարդությունն անմիջական շահառու է և ծավալվող գործընթացներում իր ավանդը ներդնող կարևոր մասնակից:

Ռազմավարությունը հիմնված է այն գիտակցության վրա, որ երիտասարդները (16-30 տարեկաններ), որոնց ընդհանուր թիվը Գորիս համայնքում, համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների, 2018 թվականին կազմել է 5158 մարդ (ընդհանուր բնակչության շուրջ 18 %-ը), հասարակության կարևոր ներուժն են, և պետք է նրանց ազատ, բազմակողմանի զարգացած, առողջ և պատասխանատու քաղաքացիներ դառնալու հնարավորություն ընձեռել:

ԳԼՈՒԽ 3. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԻՍ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Գորիս համայնքում երիտասարդական քաղաքականությունը՝ որպես համակարգված քաղաքականություն, չի իրականացվում:

Համայնքում երիտասարդական քաղաքականությունը իրականացվել է ՀՀ կառավարության և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից ընդունված մի շարք հիմնարար փաստաթղթերի, երիտասարդական պետական քաղաքականության շրջանակներում:

Պետական երիտասարդական քաղաքականությունն առավել փաստարկված դարձնելու նպատակով Նախարարության կողմից 2013 թվականին Միացյալ Ազգերի Կազմակերպության Զարգացման ծրագրի աջակցությամբ Երիտասարդական ծրագրերի իրականացման ՊՈԱԿ-ի կազմում հիմնադրվել է Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտը: Վերջինիս կողմից պարբերաբար ուսումնասիրվել են երիտասարդական հիմնախնդիրները և պատրաստվել հետևյալ զեկույցները՝ «Հայաստանի Հանրապետության երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները» (2013 թ.), «Աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրություն. գործատու-երիտասարդ-ուսումնական հաստատություն համագործակցության ինստիտուցիոնալիզացման հեռանկարները» (2014 թ.), «Երիտասարդական կազմակերպությունների քարտեզագրում և պետության կողմից ֆինանսավորվող երիտասարդական դրամաշնորհային ծրագրերի արդյունավետության գնահատում» (2014 թ.), «Երիտասարդական աշխատանքի և երիտասարդական աշխատողի վերաբերյալ հետազոտություն» (2015 թ.), «ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարության մոնիթորինգ և գնահատում» (2016 թ.):

Փաստական հենք են հանդիսացել նաև այլ կազմակերպությունների հետևյալ զեկույցները՝ «Երիտասարդական աշխատանքը Հայաստանում. մարտահրավերներ և հնարավորություններ. երիտասարդական աշխատանքի միջազգային փորձի ուսումնասիրություն» (2015 թ. «ՀՀ երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները» հետազոտությունը» (2015թ.)), Գյումրու երիտասարդության իրավիճակի վերլուծություն (2015 թ.), «Գյուղական համայնքների երիտասարդության իրավիճակի վերլուծություն զեկույց» (2015-2016 թթ.), «Անկախության սերունդ. հետազոտություն երիտասարդների շրջանում. Հայաստան, 2016 թ.»:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գորիս խոշորացված համայնքում 2019թ. ապրիլ-մայիս ամիսներին ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից իրականացվել է «Հանրային կյանքում և տեղական ինքնակառավարման ոլորտում երիտասարդների ներգրավվածության գնահատում» հետազոտությունը՝ ուղղված Գորիս խոշորացված համայնքում հանրային կյանքում և տեղական ինքնակառավարման ոլորտում երիտասարդների ներգրավվածության ուսումնասիրությանը: Հետազոտությունը իրականացվել է «Երիտասարդները հանուն իրենց ապագայի» ծրագրի շրջանակներում, որը իրականացվել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ աջակցությամբ և ֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից:

Հետազոտության նպատակն էր իրականացնել Սյունիքի մարզի Գորիս խոշորացված համայնքում հանրային կյանքում և տեղական ինքնակառավարման ոլորտում 16-30 տարեկան երիտասարդների ներգրավվածության գնահատում:

Հետազոտության առջև դրված խնդիրները ներառել են հետևյալը՝

- Ուսումնասիրել, թե որքանով են Գորիս համայնքում երիտասարդները իրազեկված Գորիս համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության և համայնքային կյանքի վերաբերյալ:
- Ուսումնասիրել, թե որքանով են Գորիս համայնքում երիտասարդները մասնակցում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը և հանրային քաղաքականության մշակմանը,
- Ուսումնասիրել, թե որքանով են երիտասարդները ներգրավված համայնքում իրականացվող միջոցառումներին, ծրագրերին և նախաձեռնություններին,
- Ուսումնասիրել, թե որոնք են ՏԻՄ-երում և համայնքային կյանքում երիտասարդների մասնակցությանը խոչընդոտող հիմնական գործոնները,
- Պարզել, թե ՏԻՄ-երում և իրականացվող հանրային քաղաքականություններում մասնակցության համար ինչպիսի կարողությունների և հմտությունների կարիք ունեն երիտասարդները:
- Իրականացնել ՏԻՄ-ի գործունեության մոնիթորինգ՝ համայնքային բյուջե, հնգամյա զարգացման ծրագիր և ՏԻՄ աշխատանքային պլանները՝ հաշվի առնելով երիտասարդներին ուղղված միջոցառումները
- Ուսումնասիրել, թե համայնքի ՏԻՄ մարմիններում որքանով են ներկայացված երիտասարդները:

Հետազոտության շրջանակներում կիրառվել է երիտասարդների ֆոկուս խմբային քննարկման մեթոդը՝ ընդհանուր առմամբ իրականացվել է 10 ֆոկուս խմբային քննարկում, որին մասնակցել են 117 երիտասարդներ: Իրականացվել է նաև խորին հարցազրույցներ առանցքային տեղեկատուների հետ: Փաստաթղթերի վերլուծության մեթոդով իրականացվել է համայնքային զարգացման ծրագրերի, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և պլանների, իրականացված երիտասարդական միջոցառումների հաշվետվությունների ուսումնասիրություն:

Տվյալների հավաքագրման աշխատանքներում ներգրավվել են համայնքում բնակվող երիտասարդներից բաղկացած քաղաքացի-մոնիտորների խումբ, ինչն էլ իր հերթին նպաստել է ներգրավված երիտասարդների կարողությունների ավելացմանը:

Հետազոտությունն իրականացվել է Գորիս խոշորացված համայնքում՝ ներառելով համայնքի մաս կազմող Գորիս քաղաքը և Վերիշեն, Ակներ, Քարահունջ, Որոտան, Խնձորեսկ, Հարթաշեն բնակավայրերը:

Հետազոտության արդյունքում բացահայտվել են Գորիս համայնքի երիտասարդների կարիքները և առաջնահերթությունները.

1. Համայնքային ենթակառուցվածքների ոչ բարվոք վիճակը կամ բացակայությունը,
2. Զբաղվածության և աշխատատեղերի բացակայությունը համայնքում,
3. Սոցիալ-մշակութային կյանքի պասիվությունը,
4. Երտասարդների ցածր իրազեկությունը և մասնակցությունը համայնքային կյանքին և ՏԻՄ գործունեությանը:

1. **Համայնքային ենթակառուցվածքների** հետ կապված երիտասարդների կողմից բարձրաձայնված հիմնական հիմնախնդիրները վերաբերել են ներհամայնքային ճանապարհների ոչ բարեկարգ լինելուն, աղբահանության համակարգի թերություններին, տրանսպորտային համակարգի թերզարգացվածությանը, գյուղատնտեսական տեխնիկայի անհասանելիությանը, փողոցային լուսավորության ոչ բավարար մակարդակին, ջրամատակարարման համակարգի խափանումներին և այլն: Երիտասարդ ծնողների կողմից առանձնացվել է նաև բնակավայրերում մանկական խաղահրապարակների բացակայության խնդիրը, ինչի պատճառով ծնողները չեն կարողանում կազմակերպել երեխաների հետաքրքիր առօրյան:
2. **Աշխատանքի հնարավորությունների և աշխատատեղերի** բացակայությունը երիտասարդների կողմից շեշտադրված առավել կարևոր հիմնախնդիրներից մեկն է, որի մասին բարձրաձայնվել է բոլոր բնակավայրերում տեղի ունեցած ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում: Այս հիմնախնդրով է պայմանավորված, որ երտասարդները հիմնականում մեկնում են արտագնա աշխատանքի, ինչպես նաև նրանց շրջանում նկատելի է մշտական արտագաղթի միտումներ համայնքից:

   Բարձր է երիտասարդների գործազրկության մակարդակը, աշխատաշուկայում մրցունակ չեն. Թույլ է մասնագիտական կողմնորոշման հնարավորությունները: Ոչ բավարար են զարգացված միջին մասնագիտական կրթության ուղղությունները, դրանք ապահովող ենթակառուցվածքները:

   Երիտասարդները պասիվություն են ցուցաբերում գործարար ծրագրեր, գաղափարներ առաջ քաշելու հարցում:
3. **Սոցիալ-մշակութային կյանքի կազմակերպման** առումով երիտասարդները հատկապես կարևորել են մշակութային և ժամանցի վայրերի բացակայության հիմնախնդիրը և սպորտային ու մշակութային միջոցառումների սակավությունը համայնքում: Համաձայն երիտասարդների՝ ժամանցի վայրերի սակավությունը մի կողմից հանգեցնում է նրան, որ երիտասարդները չեն կարողանում հետաքրքիր կազմակերպել իրենց առօրյան, մյուս կողմից առավել քիչ են սոցիալականացվում և շփվում իրենց հասակակիցների հետ: Երիտասարդները նաև կարևորել են

համայնքում որ ֆորմալ կրթական կենտրոնների սակավությունը, ինչպես օրինակ օտար լեզուների ուսուցման, արհեստագործական կենտրոններն են և այլն:

4. **Երիտասարդների ցածր իրազեկությունը և մասնակցությունը համայնքային կյանքին և ՏԻՄ գործունեությանը:** Հարցման ենթարկված երիտասարդների միայն 5%-ն է նշել, որ մասնակցում է ավագանու նիստերին, որոնց թվում գրեթե միշտ մասնակցում է երիտասարդների միայն 1%-ը: Հարցման ենթարկված երիտասարդների 96%-ը երբևէ չի մասնակցել համայնքի բյուջեի վերաբերյալ հանրային լսումների, իսկ 92%-ը՝ համայնքի քաղաքականությունների, ծրագրերի և պլանների քննարկումներին: Համեմատաբար առավել մեծ թվով երիտասարդներ են մասնակցել հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող քննարկումներին, սեմինարներին և այլ միջոցառումներին, բողոքի ցույցի կամ երթի կամ համայնքային խնդիրների վերաբերյալ ստորագրահավաքի: Ինչ վերաբերում է համայնքային ծառայությունների մատուցման վերահսկողությանը, ապա երիտասարդների 8%-ը նշել է, որ այսպիսի գործողություններ տեղի չեն ունեցել, 91%-ը՝ երբեք չի մասնակցել հանրային վերահսկողության և միայն 1%-ն է նշել, որ հանրային ծառայությունների մատուցման վերահսկողության գործողություններում մասնակցում է հազվադեպ:

«Հանրային կյանքում և տեղական ինքնակառավարման ոլորտում երիտասարդների ներգրավվածության գնահատում» հետազոտության արդյունքները կցված է **(Հավելված 1):**

ԳԼՈՒԽ 4. ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԿԱՐԻՔՆԵՐ, ԽՆԴԻՐՆԵՐ)

Երիտասարդներն առանցքային դեր ունեն համայնքի զարգացման և առաջընթացի գործընթացներում: Նրանք հանդիսանում են կարևոր դերակատարներ, որոնց հմտությունների, գիտելիքների զարգացման միջոցով պետք է հնարավորինս ապահովել նրանց քաղաքացիական ներգրավվածությունը և համայնքային հիմնախնդիրների լուծման հարցում ակտիվ մասնակցությունը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ այն երիտասարդները, որոնք ակտիվ ընդգրկված են քաղաքացիական նախաձեռնություններում, առավել հակված են կյանքի դրական փոփոխություններին, քան այն երիտասարդները, որոնք ունեն պասիվ դիրքորոշում և չեն մասնակցում որևէ նախաձեռնության:

Հայաստանի ներկայիս սոցիալ-տնտեսական իրավիճակը ազդել է բնակչության բոլոր խավերի, այդ թվում երիտասարդության վրա: Երիտասարդների խնդիրներն առավել ցայտուն են Հայաստանի մարզերում, որտեղ զգալի տարբերություն գոյություն ունի մարզերում և մայրաքաղաքում ապրող երիտասարդներին հասանելի տեղեկատվության և հնարավորությունների միջև: Մարզերում ապրող երիտասարդների հնարավորությունները զգալիորեն պակաս են աշխատանք գտնելու, ազատ ժամանցի, ինքարտահայտման և տարբեր ծրագրերում մասնակցելու հարցերում: Որպես հետևանք նրանք կարող են դառնալ հուսալքված ու պասիվ:

- Հիմնախնդիրներից մեկն էլ այն է, որ երիտասարդները լքում են իրենց համայնքները՝ մեկնելով մեծ քաղաքներ և երկրներ, ինչը լուրջ խոչընդոտ է դառնում համայնքի բնակավայրերի զարգացման համար: Համայնքի երիտասարդները չունեն հնարավորություններ զարգացնելու իրենց հմտությունները, գիտելիքներն այսօրվա միջազգային պահանջներին համահունչ: Մի շարք գյուղական համայնքներում երիտասարդները նույնիսկ համացանցից օգտվելու հնարավորություն չունեն:
- Ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագրում շեշտադրում է կատարվել համայնքի երիտասարդների այլընտրանքային կրթության համար հնարավորությունների ստեղծման, առաջնորդական հմտությունների և գիտելիքների զարգացման, համայնքների հիմնախնդիրների քարտեզագրման և այդ հիմնախնդիրնի լուծման հարցում երիտասարդների մասնակցության վրա: Ծրագրի շրջանակներում երիտասարդների համար կստեղծվի հնարավորություն ընդլայնելու իրենց կապերը, հանդիպելու տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ներկայացնելու իրենց տեսակետները համայնքների զարգացման հարցում, կստեղծվի միջավայր, որտեղ երիտասարդները հնարավորություն կունենան քննարկելու իրենց հուզող հարցերը և գործընկերային ցանցի հետ համագործակցության միջոցով լուծելու դրանք:
- Համայնքում լուրջ հիմնախնդիր է նաև երիտասարդության գործազրկությունը. երիտասարդները դժվար են աշխատանք գտնում, ինչն էլ առաջացնում է տնտեսական անկայունություն և անվստահություն «վաղվա օրվա» վերաբերյալ: Հաճախ պատճառն այն է, որ երիտասարդները տեղեկացված չեն և չունեն համապատասխան հմտություններ և գիտելիքներ աշխատանքի դիմելու, հարցազրույցներին մասնակցելու համար, շատ հաճախ չեն գիտակցում և իրազեկված չեն աշխատանքային էթիկայի կանոնների վերաբերյալ: Պատճառներից մյուսն էլ այն է, որ աշխատաշուկայի առաջարկները (թափուր աշխատատեղերը) չեն համընկնում երիտասարդների մասնագիտություններին:
- Հայաստանի Հանրապետությունում 2018թվականի ապրլից մեկնարկված քաղաքական, սոցիալ-տնտեսական, գործընթացները լայնածավալ խնդիրներ են առաջադրում երիտասարդությանը, որոնց հաղթահարումը կարող է իրականացնել իր երկրի ապագայով մտահոգված, կրթված, մրցունակ, ֆիզիկապես և հոգեպես առողջ և սոցիալապես պատասխանատու երիտասարդությունը:
- Երիտասարդների շահերի պաշտպանության խնդիրն է երիտասարդական համայնքային քաղաքականությունը համապատասխանեցնել ժամանակի պահանջներին՝ նկատի ունենալով, որ երիտասարդությունը պետք է դառնա հզոր համայնքի կայացման գլխավոր շարժիչ ուժը և գործոնը:
- Կարևոր է շեշտադրում կատարել համայնքի երիտասարդների այլընտրանքային կրթության համար հնարավորությունների ստեղծման, առաջնորդական հմտությունների և գիտելիքի զարգացման, երիտասարդական հիմնախնդիրների քարտեզագրման և այդ հիմնախնդիրների լուծման հարցում երիտասարդների մասնակցության վրա:

ՀԻՄՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- ✓ Խթանել երիտասարդների քաղաքացիական ակտիվությունը և մասնակցությունը համայնքային մակարդակում,

- ✓ Նպաստել երիտասարդների զբաղվածության և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ մեխանիզմների մշակմանը և ներդրմանը,
- ✓ Խթանել երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպը,
- ✓ Խթանել երիտասարդների ներգարվվածությունը մշակութային կյանքին,
- ✓ Նպաստել հոգևոր-մշակութային արժեքների ձևավորմանը,
- ✓ Համայնքում նպաստել երիտասարդների շարունակական կրթությանը, ստեղծել ոչ ֆորմալ կրթական պայմաններ:

ԳԼՈՒԽ 5. ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿՈՂՄԵՐ

Ռազմավարության հիմնական պատասխանատուն և իրականացնողը Գորիսի համայնքապետարանն է: Համայնքապետարանը իր ծրագրերը իրականացնում է համայնքապետարանի աշխատակազմի միջոցով:

Ռազմավարության իրականացման գործընթացում համայնքապետարանը սերտորեն համագործակցում է միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների հետ՝ զարգացնելով գործընկերային հարաբերությունները և ընդլայնելով համատեղ նախագծերի իրականացում հնարավորությունները:

ԳԼՈՒԽ 6. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Երիտասարդական համայնքային քաղաքականության շրջանակներում իրականացվող ծրագրերը ֆինանսավորվում են Գորիս համայնքի բյուջեի հաշվին՝ միջազգային դոնորների, տեղական հասարակական կազմակերպությունների և մասնավոր ներդրումների ներգրավմամբ:

Համայնքապետարանը Ռազմավարության ծրագրերի իրականացման համար ֆինանսավորումը ուղղում է՝

1. համայնքապետարանի կողմից իրականացվող երիտասարդական ծրագրերին,
2. տեղական երիտասարդական հասարակական կազմակերպություններին տրամադրում է դրամաշնորհներ՝ սեփական նախաձեռնությամբ ծրագրերի իրականացման համար:

Ֆինանսավորվող կառույցները հաշվետու են համայնքապետարանին՝ ծրագրերի ֆինանսական ծախսերի և իրականացված ծրագրերի բովանդակային մասերով:

ԳԼՈՒԽ 7. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Երիտասարդական համայնքային ռազմավարության մոնիթորինգի և գնահատման պլանի մշակման նպատակն է բարձրացնել ռազմավարության շրջանակներում պլանավորված ծրագրերի իրականացման արդյունավետվությունը և դրանց արդյունքների տեսանելիությունը: Յուրաքանչյուր տարվա ծրագրերի համար համատեղ մշակվում և հաստատվում է ծրագրերի մոնիթորինգի և գնահատման պլանը:

Իրականացվող աշխատանքների արդյունավետության ապահովման և հնարավոր ռիսկերի ճիշտ հայտնաբերման ու շտկման նպատակով նախատեսվում է իրականացնել մոնիթորինգ և գնահատում հետևյալ մակարդակներում՝

1) Առանձին գործողությունների և դրանց նպատակային արդյունքների մոնիթորինգ,
2) Միջոցառումների գործողությունների իրականացվելիության և արդյունքի ընթացիկ գնահատումներ,
3) Ռազմավարության իրականացման և արդյունքի գնահատում:

Մոնիթորինգի և գնահատման նպատակին հասնելու համար միջոցառումների ծրագրի յուրաքանչյուր տողի համար մշակվել են ցուցանիշներ, տեղեկատվության հավաքագրման մեթոդներ, ինչպես նաև սահմանվել է յուրաքանչյուր ցուցանիշի ելակետային և թիրախ արժեքները:

Ռազմավարության համապարփակ գնահատում նախատեսվում է իրականացնել երկու անգամ՝ միջնաժամկետ և վերջնաժամկետ: Գնահատման շրջանակներում ռազմավարության արդյունավետությունը կգնահատվի հետևյալ չափանիշներով՝

1) Ռազմավարության արդիականությունը կամ համապատասխանությունը շահառուների կարիքներին,
2) Ռազմավարության արդյունավետությունը՝ արդյունք-միջոց հարաբերակցության տեսանկյունից,
3) Ռազմավարության ազդեցությունը,
4) Ռազմավարության արդյունքների կայունությունը:

ԳԼՈՒԽ 8. ՀԱՆՐԱՅՆԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ

Ռազմավարության և միջոցառումների ծրագրի հանրայնացման, տեսանելիության բարձրացման համար Գորիսի համայնքապետարանը օգտագործում է հետևյալ ռեսուրսները.

1) Գորիսի համայնքապետարանի կայք էջը (www.goriscity.am),
2) Էլեկտրոնային լրատվամիջոցներ (հեռուստատեսություն, համացանցային հարթակներ),
3) Համայնքային, մարզային հանդիպումներ, տեղեկատվական ֆորումներ, աշխատանքային հանդիպումներ:

Ռազմավարության և միջոցառումների ծրագրի հանրայնացման, տեսանելիության բարձրացման հիմնական թիրախ խմբերն են՝

1) Երիտասարդներ՝ համայնքի քաղաքային և գյուղական բնակավայրերից, երիտասարդական ոլորտով հետաքրքված քաղաքացիներ:
2) Երիտասարդության ոլորտում աշխատող հասարակական կազմակերպությունները,
3) Միջազգային կառույցները, այդ կառույցների հայաստանյան ներկայացուցչությունները,
4) Հնարավոր համագործակիցներ, գործընկերներ (երիտասարդական աշխատողներ, հետազոտողներ, փորձագետներ),